ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1/017

ՀՀ-ԼՄԱՀ-ՄԿԾՁԲ-20/01

ք. Երևան «08» հոկտեմբեր 2020թ.

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Մատակարար, ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Ստեփանավանի համայնքապետարանը, այսուհետ՝ Բաժանորդ, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է մատակարարել, Բաժանորդ՝ ընդունել Մատակարարի կողմից հրատարակված հետևյալ տեղեկագրերը և վճարել դրանց համար.

N	Ապրանքի անվանումը	Բաժանորդագրության քանակը	Ժամկետը
1.	«ՀՀ Պաշտոնական տեղեկագիր»	1 կոմպլեկտ (848 մամուլ)	2020թ.
2.	«ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր»	1 կոմպլեկտ (340 մամուլ)	2020թ.

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Մատակարարը պարտավոր է՝

2.1.1. Բաժանորդին հանձնել վերոհիշյալ տեղեկագրերը:

2.1.2. Ապրանքը Բաժանորդին առաքել հետևյալ հասցեով՝ Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/1:

2.1.3. Բաժանորդին հանձնել որակյալ ապրանք:

2.1.4.Պաշտոնական տեղեկագրի հերթական համարի բովանդակության էլեկտրոնային ծանուցում՝ մինչև տեղեկագրերի հրապարակումը:

2.1.5. Բաժանորդի մասնագիտական ոլորտին վերաբերվող իրավական ակտերի տարեկան երկանգամյա անվճար տրամադրում:

2.1.6. Անհատական օգնականի աջակցություն՝ Բաժանորդին հետաքրքրող ցանկացած իրավական ակտի վերաբերյալ:

2.1.7.Իրավական ակտի էլեկտրոնային տարբերակով (MS WORD, PDF, JPG) տրամադրում անհրաժեշտության դեպքում

2.2. Բաժանորդն իրավունք ունի՝

եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք՝ 10 օրվա ընթացքում պահանջել փոխարինելու այն որակյալ ապրանքով:

2.3. Բաժանորդը պարտավոր է՝

2.3.1. Կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն պայմանագրի համաձայն մատակարարվող տեղեկագրերի ընդունումը ապահովելու համար:

2.3.2. Ստուգել ընդունված ապրանքները, ստուգել դրանց քանակությունն ու որակը եռօրյա ժամկետում:

2.3.3. Անհապաղ գրավոր ծանուցել մատակարարին հայտնաբերված թերությունների և անհամապատասխանությունների մասին:

2.3.4. Վճարել ապրանքի համար սույն պայմանագրի 3-րդ բաժնում սահմանված կարգով:

3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1.Բաժանորդագրության ընդհանուր գումարը կազմում է 222.000 (երկու հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

3.2. Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն կողմերի համաձայնությամբ:

3.3. Բաժանորդը պայմանագրի 3.1. կետում նշված գումարը վճարում է Մատակարարին անկանխիկ, բանկային փոխանցումով, համաձայն ներկայացված վճարման փաստաթղթի:

3.4. 1.1 կետում նշված մամուլը գերազանցելու դեպքում, Բաժանորդը կարող է որոշել պայմանագրային գումարից դուրս մնացած համարների ձեռքբերման նպատակահարմարությունը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Մատակարարման ժամկետի խախտման համար Բաժանորդն իրավունք ունի պահանջելու Մատակարարից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ սույն պայմանագրի գնի 0,01%-ի չափով:

4.3. Բաժանորդի կողմից պայմանագրի գինը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջելու Բաժանորդից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ չվճարված գումարի 0,01%-ի չափով:

4.4. Սույն պայմանագրով նախատեսված տույժի վճարումը Կողմերին չի ազատում պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն Կողմերի կողմից ստորագրելու պահից:

5.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ Կողմերի ստորագրությամբ:

5.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարար	*Բաժանորդ*
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	Ստեփանավանի համայնքապետարան
ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ՀՀ, ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 163008203131	Հ/Հ 900256101016
ՀՎՀՀ 02538276	ՀՎՀՀ 06954104
Հեռ.52-01-28,54-44-41	
Տնօրեն _____Ս. Գրիգորյան	Համայնքի ղեկավար_____Մ.Ղարաքեշիշյան